ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 249 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջակա-նորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆիշինգ թեքըլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (Phishing Tackle Limited, 167-169 Գրեյթ Փորտլանդ, Լոնդոն, Միացյալ Թագավորություն) 2026 թվականի ապրիլի 14-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի ապրիլի 29-ն ընկած ժամանակահատվածի համար համակարգչային ծրագրերի արտոնագրերի

տարեկան բաժանորդագրության ձեռքբերում՝ 4,104.78 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օն դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 04429615) 2026 թվականի ապրիլի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մասիս քաղաքում Թումո կենտրոնի էլեկտրական ենթակայանի նախագծման աշխատանքների իրականացում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ